Արձանագրություն N 2

«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24.08.2016 թ.
ժ. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Ա. Ջանջուղազյանը,
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Եղիազարյան /գնահատող/,
	Ռ. Խոջայանը /գնահատող/,
	Հ. Սարգսյանը /բացող/,
	Ա. Աշուղյանը /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1.Բանակցային ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը 49508800 ՀՀ դրամ է.

բ) Բանակցային ընթացակարգի հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

	Մասնակցի անվանումը	Հասցե
1	<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ, <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ /Կոնսորցիում/	Gamshin-ltd@rambler.ru, khach_bild_group@rambler.ru
2	<<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ	khach_bild_group@rambler.ru
3	<<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ, <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ /Կոնսորցիում/	namenased@mail.ru

գ) Բոլոր Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

դ) <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ-ի, <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ /Կոնսորցիում/ կողմից ներկայացված հայտում առկա բոլոր փաստաթղթերը (Ներառյալ գնի առաջարկը, հայտի ապահովումը և վճարման պահանջագիրը) հաստատված չեն կոնսորցումի անդամ <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ կողմից ինչպես նաև <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Ավետիսյանի հրավերով պահանջվող՝ Մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրության փոխարեն առկա է Լ. Բաբաջանյանի էլեկտրոնային թվային ստորագրությունն, ինչի մասին հայտում չկա համապատասխան լիազորագիր:

զ) Մասնակիցների կողմից առաջարկած գները հետևյալն են.

(ՀՀ դրամ)

Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ, <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ /Կոնսորցիում/	35310345	3884138	7838897	47033380
<<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ	23416334	2575797	5198426	31190557
<<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ, <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ /Կոնսորցիում/	37737373	2264242	-	40001615

2. Բանակցային ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բանակցային ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

հ/հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Արա և Այեմնիկ>> ԲԲԸ, <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ /Կոնսորցիում/	Բավարար
2	<<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ	Բավարար
3	<<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ, <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ /Կոնսորցիում/	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

2.2 Հիմք ընդունելով <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ, <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ Կոնսորցիումի հայտի ստացած <<Անբավարար>> գնահատականը՝ հանձնաժողովը մերժեց <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ, <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ Կոնսորցիումի բանակցային ընթացակարգի հայտը հետևյալ հիմնավորմամբ.

- Հայտում առկա բոլոր փաստաթղթերը (Ներառյալ գնի առաջարկը, հայտի ապահովումը և վճարման պահանջագիրը) հաստատված չեն կոնսորցիումի անդամ <<Նաիրիի Բերիություն>> ՍՊԸ կողմից ինչպես նաև <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Ավետիսյանի հրավերով պահանջվող՝ Մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրության փոխարեն առկա է Լ. Բաբաջանյանի էլեկտրոնային թվային ստորագրությունը,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

3. Բանակցային ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

- Առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ -ին,
- Երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել <<Արա և Այեմնիկ>> ԲԲԸ, <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ կոնսորցիումին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը.

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, և
- Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 31-ին, ժամը՝ 16:00-ին, ՀՀ քաղաքաշինության նախարարության շենքում, N 448 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ Ռ. Եղիազարյան

Ռ. Խոջայան

Հ. Սարգսյան

Ա. Աշուղյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան